

EXLIBRIS

ԹԱՏԵՐԱԿԱՆ ԳՊԱՄԱՐՏ

ՎԻԿՏՈՐ ՀՅՈՒԳՈՆ *ընդդեմ* ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԻ

1832 ԹՎԱԿԱՆ

ԱՐՔԱՆ ԶՎԱՐՃԱՆՈՒՄ Է

ԴՐԱՄԱ ՀԻՆԳ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՄԲ

*Մինիստրի հրամանը փորձում է կասեցնել ներկայացումը.
«Արքան զվարճանում է»-ն արգելվում է առաջնախաղի հաջորդ օրը:
Վրդովված հեղինակն իր սրեղծագործության դատը պաշտպանում է 1832 թվականի
նոյեմբերի 30-ին գրած քննախոսականում, որը և դառնում է պիեսի առաջաբանը:
Հյուգոն իր և իր դրամայի իրավունքները պաշտպանում է նաև դատարանում:*

No 1

17 08 2023

սովորաբար անկանխակալ հանդիսականին, այդ՝ բարեկամ ու թշնամի չունեցող հանդիսականին, այդ հանդիսականին, որը ուսուցանում է բանաստեղծին և որին ուսուցանում է բանաստեղծը:

Շատ հետաքրքրաշարժ է այն անցումային քաղաքական ժամանակաշրջանը, որն ապրում ենք մենք: Սա այն համընդհանուր հոգնածության պահերից է, երբ բռնակալության բոլոր կարգի գործողությունները հնարավոր են անգամ անկախության ու ազատության գաղափարներին լիովին համակված հասարակության մեջ: Ֆրանսիան արագ քայլեց 1830 թվականի հուլիսին, նա երեք լիարժեք օր ունեցավ. նա երեք մեծ շրջան ունեցավ քաղաքակրթության ու առաջընթացի ասպարեզում: Հիմա շատերն են ուժասպառվել, շատերն են շնչասպառ եղել, շատերն են ուզում դադար առնել: Ուզում են կանգնեցնել խիզախ հոգիներին, որոնք չեն հոգնել և առաջանում են անվերջ: Ուզում են սպասել ուշացողներին, որոնք ետ են մնացել, և հնարավորություն տալ նրանց միանալ մյուսներին: Այստեղից է բխում տարօրինակ վախն այն բոլորի հանդեպ, ով շարժվում է, ով խոսում է, ով մտածում է: Արտառոց իրավիճակ, որը հեշտ է հասկանալ, բայց դժվար է սահմանել: Դա այն հոգիների ամբողջությունն է, որոնք վախենում են բոլոր կարգի գաղափարներից: Դա այն շահերի միությունն է, որոնց սպառնում է տեսությունների առաջխաղացումը: Դա առևտուրն է, որ երկյուղում է մտավոր համակարգերից. դա վաճառականն է, որ ցանկանում է վաճառել. դա փողոցն է, որից վախենում է վաճառատեղանը. դա զինված կրպակն է, որ պաշտպանվում է:

Մեր կարծիքով կառավարությունը չարաշահում է հանգստի այդ հակումը և այդ երկյուղը նոր հեղափոխությունների հանդեպ: Նա հասել է մանր բռնակալության: Նա վնասում է թե՛ իրեն, թե՛ մեզ: Եթե նա կարծում է, թե այժմ մարդկանց մտքերն անտարբեր են դարձել ազատության գաղափարների հանդեպ, սխալվում է. առկա է սուսկ հոգնությունը: Նրանից մի օր խստորեն կպահանջեն հաշիվ տալ բոլոր այն անօրինական գործողությունների համար, որոնք, ինչպես տեսնում ենք, վերջին ժամանակներս շատացել են: Ինչ ճանապարհ է նա մեզ ստիպել անցնել: Երկու տարի առաջ վախենում էինք կարգ ու կանոնի համար, այժմ արդեն դողում են ազատության համար: Ազատ մտածողության, բանականության և արվեստի հարցերը միահեծանա-

րեն լուծում են բարիկաղների թագավորի վեզիրները: Շատ տխուր է տեսնել, թե ինչպես է ավարտվում հուլիսյան հեղափոխությունը, mulier formosa superne⁵.

Անշուշտ, եթե նկատի ունենանք խնդրո առարկա երկի և հեղինակի ոչ այնքան կարևորությունը, ապա նրանց դեմ մինիստրության կատարած գործողությունն այնքան էլ մեծ բան չէ: Դա սուսկ գրական աշխարհի դեմ ուղղված մի փոքրիկ կեղտոտ հարված է, որի միակ արժանիքն այն է, որ շատ էլ չի առանձնանում այն բռնի գործողությունների հավաքածուի մեջ, որոնց շարունակությունն է հանդիսանում: Բայց ավելի լայն հայացքի դեպքում կտեսնենք, որ այս անգամ հարցը միայն չի վերաբերում դրամային և բանաստեղծին, այլ ինչպես սկզբում ասացինք, ազատությանն ու սեփականությանն ամբողջապես: Մրանք բարձր ու լուրջ շահեր են. և չնայած հեղինակը ստիպված է եղել այս կարևոր գործն սկսել Ֆրանսիական Թ-ատրոնի նկատմամբ սովորական առևտրային հայցով, չկարողանալով անմիջապես հանդես գալ մինիստրության դեմ, որը պատասպարվում է պետական խորհրդի մերժումների ետևում, բայց նա հույս ունի, որ իր գործը բոլորի աչքին մեծ գործ կերևա այն օրը, երբ ինքը կներկայանա կոնսուլական դատարան, աջ կողմում՝ ազատությունը, ձախ կողմում՝ սեփականությունը: Նա ինքը, եթե հարկ լինի, կխոսի ի պաշտպանություն իր արվեստի անկախության: Նա վստահորեն կպաշտպանի իր իրավունքը՝ արժանապատվությամբ ու հստակությամբ, առանց որևէ մեկի հանդեպ ատելության ու նաև առանց վախի: Նա հավատում է բոլորի համագործակցությանը, մամուլի անկեղծ ու սրտակից աջակցությանը, հասարակական կարծիքի արդարամտությանը, դատարանի անկանխակալությանը: Նա հավատացած է, որ կհաջողի: Պաշարողական դրությունը կվերացվի ինչպես գրական, այնպես էլ քաղաքական կյանքում:

Երբ դա կատարվի, երբ նա վերադառնա՝ տանելով իր հետ բանաստեղծի և քաղաքացու իր անբասիր, անխախտ ու անաղարտ ազատությունը, նա դարձյալ խաղաղ սրտով կանցնի իր կյանքի գործին, որից նրան կտրում են բռնությամբ և որը նա չի ցանկացել երբեք լքել ոչ մի վայրկյան: Նա իր անելիքն ունի, գիտե այդ, և ոչինչ դրանից չի շեղի նրան: Այս պահին նրան քաղաքական դեր է ընձեռված. նա չի ձգտել դրան, բայց ընդունել է: Իսկապես, իշխանու-

թյունը, որ հարձակվում է մեր դեմ, շատ բան չի շահի նրանից, որ մենք՝ արվեստի մարդիկ, թողնենք մեր բարեկիզճ, հանգիստ, խոր ու մաքուր գործը, մեր սուրբ գործը, անցյալի և ապագայի մեր գործը՝ դժգոհ, վիրավորված ու խստորեն միանալու համար այն անհարգալից ու ծաղրասեր լսարանին, որը տասնհինգ տարի է գոռոցներով ու սուլոցներով ճանապարհում է որոշ քաղաքական խղճով ու ձախավեր գործիչների, որոնք կարծում են, թե հասարակարգ են կառուցում, քանզի ամեն օր մեծ դժվարությամբ, քրտնաթոր ու շնչակտուր, օրինագծերի կույտեր են քարշ տալիս Տյուրիլիից մինչև Լյուքսեմբուրգի Բուրբոնյան պալատը:


30 նոյեմբերի, 1832 թ.

Ծանոթ.

*ՀՀ մարտության քարտիկա – խոսքը վերաբերում է 1830 թ. Հուլիսյան հեղափոխության օրերին Դեպուտատների պալատի մշակած սահմանադրական քարտիկային, որը Լուի-Ֆիլիպը ստիպված է եղել ստորագրել որպես պարտադիր պայման՝ իշխանություն իրեն հանձնելու համար: Քարտիկան ընդգրկել է մի շարք ազատություններ (այդ թվում նաև՝ խոսքի), որոնք սահմանափակում էին թագավորի իրավունքները՝ համապատասխանաբար մեծացնելով ներկայացուցչական մարմինների իշխանությունը: «ՀՀ մարտության քարտիկա» արտահայտությունը Լուի-Ֆիլիպին է՝ ասված հուլիսյան օրերին:

Ֆրանսերենից թարգմանությունը, ներածական հոդվածը և ծանոթագրությունները Հենրիկ Բախչեյանի, «Արքան Զվարճանում է», ՄԱՐԳ-ԻՍ ԽԱՂԵՆՅ, 1998

⁵ Չքնաղ կինը վերևից (լատ. Հորատիուսի «Բանաստեղծական արվեստից»):



Res 1018 (pl 44)

Le Roi Samuse